ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 33-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշման նախագծի ընդունումը բխում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներից՝ համաձայն որի, համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն է ներկայացնում Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի <<Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող 2024 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> N33-Ա որոշմամբ հաստատված N1 հավելվածը նոր խմբագրությամբ շարադրելու, Նաիրի համայնքի <<Բուժականի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի գույքի ցուցակը համաձայն հավելված 2-ի հաստատելու, Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի <<Նաիրի համայնքի սեփականություն հանդիսացող 2024 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին>> N 33-Ա որոշմամբ հաստատված գույքագրման ցուցակի N 1 և N 15 հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի N 33-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
որոշման նախագծի

Նաիրի համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 14-ի N 33-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծի ընդունումը համայնքի 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի ենթադրում: